ԱՅՐԻ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Լիանա Դալլաքյան

Այրի կանանց ամուսնական կարգավիճակի հետ կապված հարցերը ոչ մեծ ծավալով, այլ դիպվածաբար գտնվել են հայ եկեղեցական կանոնական իրավունքի, հայոց աշխարհիկ իրավունքի և հայոց սովորութային իրավունքի ուշադրության շրջանակում: Հայոց եկեղեցական կանոնադրության և ազգագրական նյութերի ուսումնասիրման և համադրման միջոցով փորձել ենք ամփոփ ներկայացնել այրի կանանց ամուսնության հարցը: Վեր են հանվել աստվածաշնչյան այն դրվագները, որոնց հիման վրա հետագայում մշակվել և սահմանվել են այրի կանանց կարգավիճակի հետ կապված տարատեսակ հարցեր: Հայաստանում քրիստոնեության սկզբնավորումից սկսած՝ Հայոց եկեղեցին հոգացել է այրիների կարգավիճակի մասին՝ փորձելով վերջիններիս համար սահմանել հատուկ խնամք: Մշակվել են օրենքներ այրիների ամուսնությունը կարգավորելու համար: Այդ օրենքները բխել են ժամանակի պահանջներից և մտել են հայոց եկեղեցական կանոնական իրավունքի ոլորտ՝ պայքարելով ժամանակի սովորութային բարքերի դեմ: Այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ չնայած հայոց խիստ բարքերին՝ այրի կանանց և՛ սովորութային իրավունքով, և՛ եկեղեցական կանոնադրությամբ թույլատրել են երկրորդ անգամ ամուսնանալ, ինչն իրենից ենթադրում է կյանքի շարունակության ապահովում և սերնդաճ: Իհարկե, այրի կանանց համար նշանադրությունը կամ հարսանեկան ծեսերն ու արարողությունները նույնքան հարուստ ու հագեցած չէին կարող լինել, ինչպես սովորական ամուսնությունների դեպքում էր, սակայն ամուսնության օրինականությունը պահպանվում էր: Այս ամենը թույլ է տալիս ամուսնության մշտական ձևաչափի մեջ մտցնել ամուսնական այլ դրսևորման ձևեր, որոնք խոսում են Հայոց եկեղեցու լայնախոհության, նրա կողմից կանանց իրավունքների ու շահերի հովանավորության մասին:

---

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հայոց եկեղեցական իրավունքն ամուսնական բազմապիսի խնդիրների կողքին դիտարկել է նաև այնպիսի կարևորագույն երևույթ, ինչպիսին է այրի կանանց ամուսնության հարցը: Վերջինս իր արտացոլումն է գտել ոչ միայն եկեղեցական իրավունքի տիրույթում, այլև ժողովրդական սովորույթներում: Հասարակագիտական մտքի տարբեր ոլորտներում այս կամ այն ժողովրդի ամուսնաընտանեկան սովորույթների ու ավանդույթների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում խորքային կերպով ըմբռնել հասարակական-պատմական գործընթացներն ու փոխակերպումները: Եվ սրանով թելադրված կարևորություն է ձեռք բերում հայոց եկեղեցական կանոնների և ժողովրդական ավանդույթների շրջանակում այրի կանանց կարգավիճակի քննական վերլուծությունն ու արժևորման հիմնախնդիրը:

Որպեսզի կարողանանք առավել ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ, փորձել ենք ուսումնասիրել աստվածաշնչյան այն դրվագները, որոնց հիման վրա հետագայում կազմվել է այրի կանանց ամուսնության վերաբերյալ եկեղեցական իրավունքը: Այս տեսանկյունից առաջին հերթին համակողմանի քննարկվում են այրի կանանց վերաբերող Հայ առաքելական եկեղեցու սահմանված կանոնները և հայոց սովորութային իրավունքի շրջանակում խնդրին առնչվող դրսևորումները:

Պահպանվել և մեզ է հասել մի հնագույն զրույց, ըստ որի՝ պտղաբերության վտանգի տակ գտնվելը բացատրվում է երկու ուժի շնորհիվ. առաջինը՝ բնության ուժերն են, երկրորդը՝ հոբալն է (հաւփալ՝ վայրի աղավնի)[1]: Հոբալը դիտվում է որպես «անեղբայր քոյր», ինչպես նաև՝ իբրև «այրի կին»[2]:

Հիմնախնդրի քննական լուսաբանման համար խիստ ուշագրավ և հատկանշական է Հռութի վերաբերյալ աստվածաշնչյան զրույցը: Հռութն աստվածաշնչյան հայտնի այրի կնոջ կերպար է[3]: Նա իր ամուսնու մահից

---

[1] **Նոր բառագիրք հայկազեան լեզուի**, Հատոր Բ, Հ-Ֆ, կազմ.՝ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիւրմէլեան, Հ. Մ. Աւգերեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1837, էջ 81:

[2] **Մնացականյան Ա. Շ.,** Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 282:

[3] Գյոթեն հինկտակարանային Հռութի գրքի մասին գրում է, որ այն էպիկական իդիլիական ավանդույթների մեջ մեզ հասած հիասքանչ փոքրիկ ստեղծագործություն է, տե՛ս **Вардиман Е.**, Женщина в древнем мире, Москва 1990, стр. 281. նաև՝ **Эдит Дин**, Знаменитые женщины Библии, Москва, 1995, стр. 85.

հետո չի թողնում այրի սկեսրոջը՝ Նոոմինին, և նրանք երկուսով գնում են Բեթղեհեմ: Հռութը համարվել է իդեալական հարս, կին և մայր: Բեթղեհեմի բնակիչները հիացած էին Հռութով ոչ թե նրա տաղանդի, խիզախության կամ գեղեցության համար, այլ նրա կանացի գրավչության ու հմայքի համար: Հռութի պատմությունն ավարտվում է նրանով, որ վերջինս ամուսնանում է իր ամուսնու ազգականներից մեկի հետ և երեխաներ է ունենում: Այս պատմությունը համարվում է աստվածաշնչյան ամենահրաշալի պատմություններից մեկը[1], որում քննարկվում է այրու ճակատագիրը, հատկապես այլազգի այրու բարդ կյանքի դրամատիկ ուղին: Հրեական կրոնում տեղ գտած կանանց հարուստ կերպարների շարքում Հռութը մարմնավորում և անձավորում է կանացի իդեալը, կատարելատիպը: Կարևորվում են կանացի անձնային այնպիսի հատկանիշներ ու որակներ, ինչպիսիք են հավատարմությունը, ամուսնու ընտանիքին ծառայելու անկոտրում նվիրվածությունն ու պատրաստակամությունը, որը դառնում է կենտրոնական խնդիր ու նպատակ և հանդիսանում է կանացի սկզբի խորքայնության հոգևոր-բարոյական կոչումը: Ի դեմս Հռութի կերպարի՝ մատնանշվում է այրի կնոջ երբեմնի տառապալից, իմաստազուրկ, անզոր ու անապահով միայնակ կյանքը, կին, որը կրկին ամուսին գտնելով ամրացնում է իր դիրքը:

Եկեղեցու հայրերից Բարսեղ Կեսարացին նույնպես հիմնվել է Աստվածաշնչի վրա իր՝ այրիների վերաբերյալ սահմանումներում: Իսկ ինչպես հայտնի է՝ հայոց եկեղեցական իրավունքը մեծապես ազդված է Կեսարացու կանոններից: Բարսեղի 24-րդ կանոնի համաձայն՝ այն այրին, որը որոշում է ամուսնանալ, զրկվում է եկեղեցու բաժնից: Եկեղեցուց խնամք ստացող այրիների դասում մեծ մասամբ պառավներ էին, մինչև իսկ 60 տարեկանից բարձր[2]. «այրին, որը նպաստ է ստանում եկեղեցուց՝ իբրև այրեաց դասին պատկանող, եթե մարդու գնա, արհամարհանքի է արժանի (Տիմ. Ա. Ե 11): 60 տարեկան այրին, եթե ցանկանա էլի մարդու հետ ապրել, թող զրկվի հաղորդություն առնելուց, մինչև որ կբժշկվի ան-

---

[1] **Эдит Дин**, Знаменитые женщины Библии, стр. 82.

[2] **Մելիք Թանգյան Ն. Վ.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա Գիրք, Ս. Էջմիածին, 2011, էջ 277:

մաքուր կրքից: Եթե 60 տարեկանից առաջ այրեաց դասը մտցնենք այդպիսի կանանց, մեղավորը մենք ենք և ոչ նրանք»[1]: Այս կանոնից պարզ է դառնում, որ Բարսեղ Կեսարացին այրիների դասին է դասում 60 տարեկանից բարձր կնոջը, որը չպետք է ամուսնանար, իսկ իր հաջորդ կանոններում, մասնավորապես 41-րդ կանոնում, նա ասում է. «Այրին ում կամենայ, կարող է նրան գնալ. Ամուսնու մահը իրաւունք է տալիս մարդու գնալ ազատօրէն»[2]: Այստեղ խոսքը հավանաբար երիտասարդ տարիքում այրիացած կնոջ մասին է: Բարսեղ Կեսարացին, ըստ ամենայնի, այդ 60 տարեկանը սահմանել է Պողոս առաքյալի խոսքերից, որը Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում ասում է. «Այրիների թվում թող համարվի այն այրին, որ պակաս չէ վաթսուն տարեկանից, եղել է մեկ տղամարդու կին և վկայվել է բարի գործերով. մեծացրել է զավակներ, եղել է հյուրասեր, լվացել է սրբերի ոտքերը, օգնության է հասել նեղության մեջ եղողներին, ամբողջությամբ նվիրվել է բարեգործության: Բայց երիտասարդ այրի կանանց մերժի՛ր, որովհետև երբ ցանկասիրությամբ են լցվում, Քրիստոսի դեմ են դառնում և ուզում են ամուսնանալ, այդպիսով դառնում են մեղավորներ, որովհետև դրժում են իրենց առաջին խոստումը: Միաժամանակ ծուլության են վարժվում՝ շրջելով տնից տուն, և ոչ միայն ծույլ, այլև շատախոս և հետաքրքրասեր են, խոսում են բաներ, որոնց մասին պետք չէ խոսել: Ուզում եմ, որ այդ երիտասարդ կանայք ամուսնանան, զավակներ ծնեն, տնարար լինեն և հակառակորդին չարախոսելու որևէ առիթ չտան, քանի որ նրանցից ոմանք արդեն իսկ շեղվել են՝ սատանային հետևելով: Եթե մի հավատացյալ այրիներ ունի, թող հոգ տանի նրանց մասին, որ եկեղեցին չծանրաբեռնվի և կարողանա հոգ տանել իսկական այրիների մասին» (Տիմոթեոս Ա, 5:9-16): Իսկ Կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում ամուրիների և այրիների վերաբերյալ Պողոս առաքյալն ասում է. «եթե ժուժկալություն չունեն, թող ամուսնանան, որովհետև ավելի լավ է ամուսնանալ, քան կրքով այրվել (Կորնթ. Ա 7:9-10):

Կղեմես Ալեքսանդրացու պնդմամբ երկրորդ անգամ ամուսնացող

---

[1] **Նույն տեղում,** էջ 210:

[2] **Նույն տեղում,** էջ 212:

մարդը կարող է այդ քայլը կատարել ըստ օրենքի, բայց այս պարագայում չի կարող հասնել Ավետարանի կատարելությանը: Երկրորդ պսակն արդեն այն նշանակությունը չի ունենում, որովհետև կորցնում է առաջնային դերը: Կինը, որ ամուսնանում է տղամարդու հետ, նրա հետ կապվում է Աստծո օրենքով: Եթե ամուսինը մահանում է, կինն ազատ է և կարող է ամուսնանալ այլ տղամարդու հետ, բայց եթե չամուսնանա, ավելի օրհնյալ կլինի[1]:

Բերված օրինակները բացահայտում են բարոյական նորմերի, կրոնական ըմբռնումների և իրավական սկզբունքների ամբողջությունը, որով ղեկավարվում է անհատն ու հասարակությունը:

IV-V դարերի հայ կանոնական թարգմանական իրավունքի կարևոր դրսևորումներ են Հայոց եկեղեցու կողմից կանոնական ճանաչում ստացած 6 (7) տեղական արտաքին ժողովների կանոնախմբերը: Դրանք կարևորագույն աղբյուր են հայոց կանոնական իրավունքի ձևավորման համար: Այդ արտաքին ժողովներն են՝ Անկյուրայի (314թ.), Նեոկեսարիայի (315-324 թթ.), Գանգրայի (4-րդ դարի կեսեր), Անտիոքի (341թ.), Լաոդիկեի (325-381 թթ. միջև), Սարդիկեի (342/343 թթ.), որոնց կանոնախմբերը տեղ են գտել Հովհան Օձնեցու «Կանոնագրքում»[2]: Այդ 6 արտաքին ժողովները 1178թ. Հռոմկլայի ժողովի վճռի հիման վրա համարվում են հայոց եկեղեցական իրավունքի աղբյուր[3]:

Անկյուրայի և Կեսարիայի ժողովների 23-րդ կանոնը վերաբերում է այրի կանանց, ուր ասվում է, որ եթե այրին պոռնկություն անի, 3 տարի դրսի և 2 տարի ներսի ունկնդիր պետք է լինի, իսկ եթե նորից մեղանչի, 7 տարի ևս կավելանա սահմանված պատժի վրա[4]:

Հայոց եկեղեցու առաջին կանոնադիր ժողովում՝ Աշտիշատի ժողովում, արդեն կանոն ընդունվեց այրի կանանց վերաբերյալ և որոշվեց այրիների համար կառուցել այրիանոցներ, որոնք քանդվեցին կամ փակվե-

---

[1] **Александрийский К.,** Строматы, Том 1, Книга 3, Санкт-Петербург, 2003, стр. 439.

[2] **Միրզոյան Ն.,** Դ-Ե դարերի հայ կանոնական իրավունքի դրսևորումները: Սահակ Պարթևը՝ հայոց կանոնագիտության հիմնադիր / **Սահմանադրական մշակույթի արժեբանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում**, Բաժին Դ, Ս. Էջմիածին, 2020, էջ 143):

[3] **Մելիք Թանգյան Ն. Վ.** , Հայոց եկեղեցական իրավունքը, Ա Գիրք, էջ 159:

[4] **Նույն տեղում,** էջ 171:

ցին Պապ թագավորի ժամանակ[1]: Էական նշանակություն ունեցող իրադարձություններից հաջորդը Դվինի Բ ժողովն է, որի 25-րդ կանոնում ասվում է, որ չի կարելի կույս տղամարդկանց այրի կանանց հետ ամուսնացնել: Մելիք Թանգյանը նշում է, որ դեռևս Լուսավորչի ժամանակ այս նյութի շուրջ խոսվել է, մասնավորապես Լուսավորչի 5-րդ կանոնը, որը, իհարկե, անվավեր կանոնների շարքին է պատկանում, հստակ ասում է, որ կույսը պետք կույսի հետ ամուսնանա, իսկ երկակին՝ երկակիի հետ: Այսօր էլ գերադասելի է համարվում աղջկան ազապ տղայի հետ ամուսնացնելը, ինչպես որ ավելի գերադասելի է կույս աղջկա հետ ամուսնանալ, քան թե այրու[2]: Հայոց սովորութային իրավունքով ևս ցանկալի չէր, որ այրին ամուսնանար ազապի հետ: Ե. Լալայեանը հաստատում է այս փաստը՝ նշելով, որ կույսը կույսի և այրին այրու հետ է ամուսնանում, և երբեմն միայն կույս աղջիկը, որը «լորցած» է լինում, ամուսնանում է այրի տղամարդու հետ[3]: Սրանք արժեքավոր աղբյուրներ են, հաղորդումներ, որոնք խիստ կարևոր են ամուսնական կարգավորիչ սկզբունքների արմատավորման, մարդկային վարքի դրսևորման գործում:

Դվինի Դ ժողովը գումարվել է 645 թ. Ներսես Գ Տայեցու օրոք, որում ընդունված է 12 կանոնների մեծ մասը հիմնականում վերաբերում է քահանաների իրավունքներին ու պարտականություններին[4]: Սակայն բացի եկեղեցականներին վերաբերող կանոններից, այստեղ խոսվում է ևս մեկ կարևոր հարցի մասին: Ժողովի 7-րդ կանոնում հիշատակվում են թշնամու կողմից գերեվարված տղամարդկանց կանայք: Բանն այն է, որ պատահում էին դեպքեր, երբ ամուսինը գտնվում էր գերության մեջ, իսկ նրա կինը չէր սպասում ամուսնուն և ամուսնանում էր ուրիշի հետ: Փաստացի, նա կյանքը կապում էր այլ տղամարդու հետ, և սա, ըստ էության, թույլատրելի չէր կարող լինել: Այդ իսկ պատճառով այս կանոնով սահ-

---

[1] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 267: Ռ. Նահապետյանն այս իրավիճակը մեկնաբանում է սերնդաճը խթանելու տեսանկյունից, քանզի երկրին պետք էին աշխատող ձեռքեր, բնակչության աճ, երկրի տնտեսական աշխուժացում: Տե՛ս **Նահապետյան Ռ.**, Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի Հայոց պատմություն երկում, Երևան, 2013, էջ 37:

[2] **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., էջ 336:

[3] **Լալայեան Ե.**, Մուշ-Տարոն. Ազգագրութիւն, ԱՀ (Ազգագրական հանդես), Գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 156:

[4] **Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան**, Երևան, 2002, էջ 277:

մանվում է, որ եթե տղամարդը թշնամու ձեռքում գերի է և տարված է որևէ հեռու տեղ, իսկ նրա կինը առանց վարդապետի թողտվության ամուսնանում է, ապա այս պարագայում, երբ դեռ չի լրացել ամուսնու գերության 7 տարին, և կինը համարձակվում է ամուսնանալ, նրա արարքը որակվում է որպես պոռնկություն: Դրա համար կինը պետք է ծեծի ենթարկվի, վարդապետների ձեռքով նրա ունեցվածքից պետք է վերցվի և բաժանվի աղքատներին: Նաև սահմանվում է, որ այդ նոր ամուսնացածներին պետք է իրարից բաժանել և 7 տարի ապաշխարանքի ենթարկել: Իսկ երբ 7 տարի անց ամուսինները գերությունից վերադառնան, նորից պետք է միանան իրենց նախկին ամուսինների հետ. եթե չկամենան, թող երկրորդ ամուսնու հետ միանան, իսկ վերադարձած տղամարդիկ կարող էին օրինությամբ ուրիշ կին առնել: Իսկ այն կինը, որը համբերում է 7 տարի, և ամուսնուց ոչ մի լուր չի լինում, ապա առանց տուգանքի կամ ծեծի, օրինավոր կերպով և օրինությամբ կարող է երկրորդ անգամ ամուսնանալ, միայն թե պետք է ապաշխարի[1]: Այս հարցին անդրադարձել է նաև Ա. Սուքիասյանը՝ Կիլիկիայի հայկական պետության իրավունքի պատմությունը ներկայացնելիս[2]:

Փաստացի, Դվինի Դ ժողովը Շահապիվանի ժողովում սահմանված ամուսնալուծության 2 պատճառների կողքին ավելացնում է ևս մեկը՝ ամուսնուց 7 տարի տեղեկություն չունենալը: Բայց այս կանոնում կարծում ենք որոշակի հակասություն կա: Նրանում ասվում է, որ 7 տարվա գերությունից վերադառնալուց հետո ամուսինները պետք է միավորվեն, այսինքն կինը պետք է թողնի իր երկրորդ ամուսնուն և վերադառնա առաջինի մոտ: Այս դեպքում հակասական է այն, թե ինչպե՞ս է թույլ տրվում կնոջն ամուսնանալ, եթե հետո նա պետք է միանա առաջին ամուսնու հետ: Այս դեպքում կանոնը կարծես կորցնում է իրակավակ ուժը: Կարծում ենք այս կանոնի առկայությունը հավանաբար պայմանավորված է եղել այն իրողությամբ, որ քիչ են եղել դեպքերը, երբ տղամարդը 7 տարվա անհայտությունից (գերությունից) վերադաձել է:

Մխիթար Գոշը ևս գերեվարված կնոջ կամ տղամարդու դեպքում սահմանում է 7 տարի սպասելու ժամկետ: Ամուսինը կամ կինը 7 տարի

---

[1] **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., էջ 348:

[2] **Սուքիասյան Ա. Մ.,** Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 309:

սպասելուց և փնտրելուց հետո գերյալի ծնողների թույլտվությամբ կարող էր նորից ամուսնանալ, իսկ գերյալից մնացած իրերը պետք է վերադարձվեին նրա ծնողներին[1]: Սմբատ Սպարապետը (Գունդստաբլ), հետևելով Գոշին, գերեվարված կամ վաճառականության գնացած տղամարդու կնոջ համար կրկին սահմանում է 7 տարի սպասելու ժամկետ: Սակայն Սմբատ Սպարապետը նշում է, որ եթե ամուսինը 7 տարի անց վերադառնա և իր կնոջը գտնի ամուսնացած, ապա այդ դեպքում կնոջը պետք է հարցնեն, թե վերջինս ո՞ր տղամարդու հետ է ուզում մնալ[2]:

Որոշակիորեն այլ է նշանադրությունը լուծարելու պարագայում: Եկեղեցին նշանվող կողմերից նվերներ է վերցնում այրիների, որբերի, ուսումնարանի կամ եկեղեցու համար: Եթե բացի նշանադրության մատանիից, մինչև հարսանիքի օրն այլ իրեր են տրվել հարսնացուին, նշանի լուծարման պարագայում այդ իրերը պետք տրվեն այրիներին ու որբերին, և կողմերը միմյանցից դրանք պահանջելու իրավունք չունեն:

Ատելության պատճառով բաժանությունների մասին ևս կա անդրադարձ Մխիթար Գոշի Դատաստանագրքում: ԺԳ կանոնում ասվում է, որ եթե կինն ամուսնուց հեռանա ատելությամբ և ուրիշի հետ ամուսնանա, և պատահի այնպես, որ այդ երկրորդ այրը մահանա, ապա կինը պետք է վերադառնա իր առաջին ամուսնու մոտ, եթե իհարկե վերջինս այլ կին առած չլինի: Բայց տղամարդը կարող է նաև չընդունել կնոջը: Նույնը վերաբերում է նաև տղամարդուն: Իսկ եթե բաժանվեն և երկուսն էլ ամուսնանան, իսկ նրանց կողակիցները մահանան, ապա նախկին ամուսինները թող կրկին միավորվեն ապաշխարելով[3]:

---

[1] Դատաստանագրքի ԺԴ գլխում ասվում է, որ, երբ տղամարդը ճանապարհորդության մեջ լինի տարիներով, վերջինիս կինը պարտավոր է համբերատարությամբ սպասել ամուսնուն: Եթե նույնիսկ նրա մահվան մասին լուր ստանա, միևնույն է, պետք է սպասի 7 տարի, նոր ուրիշի հետ ամուսնանա, ինչպես որ սահմանված է գերյալների համար: Իսկ եթե կինը խախտի այս սահմանները և առանց 7 տարի սպասեու մեկ ուրիշի հետ ամուսնանա, իսկ այդ ընթացքում նրա ամուսինը վերադառնա, ապա ամուսինը կարող է իր կնոջը հետ ընդունել, եթե նույնիսկ կինն արդեն որդիներ ունի երկրորդ տղամարդուց, քանի որ այս երկրորդ տղամարդու հետ միությունը պսակով լինել չի կարող: Տե՛ս **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Գ խմբագրություն, Երևան, 2005, էջ 55, 57):

[2] Մանրամասն տե՛ս **Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ)**, Դատաստանագիրք, Երևան, 2008, էջ 88:

[3] **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, էջ 56:

Գոշի Դատաստանագրքի ԻԸ գլխի վերջին հատվածում նշվում է, որ եթե քրիստոնյա տղամարդն այրի կնոջը խաբի և նրան պղծի, ապա կամ նրան կին առնի (եթե արդեն կին չունի) կամ կնոջը տա հարյուր դրամ արծաթ[1]: «Դատաստանագրքի» ՃԻԳ գլխում մեջբերվում է Բ օրենքից ԻԴ:5 հատվածը, որտեղ խոսվում է այն մասին, որ նոր ամուսնացած տղամարդը չպետք է պատերազմ գնա. «Եթե մեկը նոր է ամուսնացել, ապա թող պատերազմի մեջ չմտնի եւ այս մասին նրանից պարտավորություն չպահանջեն, այլ թող ազատ մնա իր տան մեջ եւ իր կնոջն ուրախացնի»[2]: Դեռևս հինկտակարանային օրենքներից երևում է, որ ամեն բան մտածել են այնպես, որ կանայք վաղաժամ չայրիանան: Այնուհետև, ՃԻԹ գլխում, կրկին հիմնվելով Հին Կտակարանի[3] վրա, արգելվում է այրիներից գրավ վերցնել՝ այսպիսով վերջիններիս նկատմամբ խնամակալություն ուսուցանելով[4]: Այստեղ ևս կա նմանություն հրեական օրենքների հետ, որոնց համաձայն խիստ արգելվում էր այրի կնոջից հագուստ (Բ օրենք, ԻԴ:17), զարդեր և այլ իրեր գրավ վերցնելը: Օրենքն այրի կնոջ խնամակալությունը հանձնում էր բարեկամներին՝ ցույց տալով, թե ինչպես պետք է վերաբերվել նրան. «Ոչ մի այրի կնոջ կամ որբի մի՛ տանջեք, եթե տանջեք նրանց, ես կլսեմ նրանց ձայնը, սաստիկ կբարկանամ, սրակոտոր կանեմ ձեզ, ձեր կանայք կայրիանան, իսկ ձեր զավակները որբ կդառնան» (Ելք ԻԲ:22-24)[5]:

Հայ իրականության մեջ հարուստ ազգագրական նյութը բավականին հիշատակություններ ունի հայոց կենցաղում այրիների նշանադրության վերաբերյալ: Հայտնի է, որ անցյալում այրի կնոջ ձեռքը խնդրում էին նրա սկեսուրից և սկեսրայրից: Ըստ ավանդույթի, սկեսուրն իր մահացած տղայի հագուստներից մեկը տալիս էր փեսային, իսկ փեսան մի թաշկինակ կամ դանակ էր նվիրում հարսնացուին և նրանից ստանում

---

1 **Նույն տեղում,** էջ 62-63:

2 **Նույն տեղում,** էջ 104:

3 «Եկվորի, որբի և այրու իրավունքը մի՛ ոտնահարիր, այրու զգեստները գրավ մի՛ վերցրու...» (Բ օրենք ԻԴ:17):

4 **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, էջ 106:

5 Հրապարակային նզովքի էր ենթարկվում նա, ով «կոտնահարեր այրու իրավունքները» (Ելք ԻԷ:17): Վտանգի պահին այրին կարող էր իր ունեցվածքը թաքցնել տաճարի գանձարանում (Բ. Մակ. Գ. 10): Տե՛ս **Լոպուխին Ա.,** Ամուսնությունը եւ հարակից հարցերն ըստ մովսիսական օրենքի, «Էջմիածին» ամսագիր, 2013, ԺԲ, Ս. Էջմիածին, էջ 27:

մի այդպիսի նվեր, որով և նշանադրությունը կատարված էր համարվում[1]: Շատ հաճախ այրի կնոջ սկեսրայրը փեսայից պահանջում է այնքան գլխագին, որքան ինքն էր վճարել հարսի համար: Երբ այրի կինն ու այրի տղամարդն ամուսնանում էին, փոխանակում էին գոտիները[2]:

Այրիների հարսանիքը սովորաբար տեղի էր ունենում շատ համեստ պայմաններում: Կինը հագնում էր ամուսնու մահացած կնոջ հանդերձներից, իսկ ամուսինը կրում էր կնոջ մահացած ամուսնու հագուստը[3]:

Որպես կանոն՝ այրի կինն ամուսնանում էր այրի տղամարդու հետ: Հազվադեպ է պատահել, որ այրի կինն ամուսնանար ազապ տղամարդու հետ: Ժողովուրդը այսպիսի ամուսնության վերաբերյալ ասում է. «այրին ու կոյսը որ պսակուին, օդ հարբուխ և հազի ցաւ կը տարածուի»: Ի դեպ, եկեղեցին արգելում էր այսպիսի ամուսնությունը, իսկ ժողովուրդն էլ կամա, թե ակամա ենթարկվում էր եկեղեցու կարգերին[4]:

Մեկ այլ ուշագրավ սովորություն էր հայոց համար սրբություն համարվող «թոնրի նշանի» և «թոնրի պսակի» սովորությունը: Գրեթե բոլոր գյուղերում թոնիր շինելիս, կանչում էին քահանային, որ օրհնի այն և մի քանի տեղ մեռոն քսի: Թոնրի պսակը գլխավորապես տեղի էր ունենում այն բնակավայրերում, ուր եկեղեցի չկար: Ուշագրավ է, որ հենց այդտեղ էր կատարվում նաև այրիների «թոնրի նշանը» կամ «թոնրի պսակը»[5]:

Այստեղից եզրակացնում ենք, որ ամուսնության արտաքին ձևը այրիների համար տարբերվում էր:

---

[1] **Լալայեան Ե.,** Գանձակի գաւառ. Ընտանեկան բարք, ամուսնութիին եւ հարսանիքի սովորութիւններ, ԱՀ, Գիրք 6, Թիֆլիս, 1900, էջ 246:

[2] Ըստ ազգագրական նյութերի ամուսնության ժամանակ կատարվում էր գոտեկապության արարողություն, որը տեղի էր ունենում քավորի գլխավորությամբ: Վերջինս, նախքան կապելը, երեք անգամ հարսի գլխի վերևից վայր է գցում այդ գոտին և անում իր մաղթանքը. «Աստուած քեզ մի ղօչ տայ»: Գոտին, առհասարակ համարվել է կնոջ սեռականության սիմվոլը (տե՛ս **Իփէկեան Գ.,** Քաւոր, ԱՀ, Գիրք XXIV, Թիֆլիս, 1913, համար 1, էջ 93):

[3] **Լալայեան Ե.**, Բորչալուի գաւառ. Ամուսնությիւն եւ հարսանիքի սովորութիւններ, ԱՀ, Գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 212:

[4] **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն եւ հարսանիք, ԱՀ, Գիրք Ե, 1899, Թիֆլիս, N 1, էջ 118:

[5] **Լալայեան Ե.,** Վարանդա. Ընտանեկան բարք, Ամուսնութիւն եւ հարսանեաց սովորութիւններ, ԱՀ, Գիրք 2, Թիֆլիս, 1897, էջ 117:

Հայոց ամուսնական ավանդույթներում եղել է **լևիրատի**[1] սովորությունը, որի տարածումը շատ դիպվածային էր, իսկ ավանդույթի հիմքում ընկած էր ընտանեկան սեփականության իրավունքը: Համաձայն այդ սովորույթի՝ կինը, ըստ էության, դիտվում էր որպես ընտանիքի սեփականություն: Ամուսնու մահից հետո նրա եղբայրն էր դառնում ընտանիքում գլխավորը և ժառանգորդը[2]: Պետք է նշել, որ լևիրատի մնացուկները կամ վերապրուկները հարատևել են մինչև 19-րդ դարի վերջերը: Հայոց մեջ այդ սովորույթը շատ էր տարածված միջնադարում[3]: Դրա տիպիկ

---

1 լատ. Lewīr՝ տագր - տագրամուսնություն. ամուսնական սովորույթ, որի համաձայն այրին պարտավոր է կամ իրավունք ունի ամուսնանալու մահացած ամուսնու եղբոր հետ: Որպես խմբամուսնության վերապրուկ՝ լայնորեն տարածված էր տոհմատիրական շրջանի շատ ցեղերի մեջ: Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության շրջանում երկար ժամանակ պահպանվել է մի շարք ժողովուրդների մեջ, որին նպաստել է կնոջ դիմաց դրամ կամ գույք տալու սովորույթը: Տե՛ս **Լևիրատ**, Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 4, Երևան, 1978, էջ 588: Հին աշխարհում կրոնական սպասավորները երեխա ունեցող այրուն թույլ չէին տալիս նորից ամուսնանալ, իսկ այն այրին, որը երեխա չուներ, պետք է ամուսնանար մահացած ամուսնու եղբոր հետ: Այսպիսի ամուսնությունից ծնված զավակը համարվում էր մահացածի օրինավոր ժառանգը: Տե՛ս **Вардиман Е.**, նշվ. աշխ., стр. 278.

Մեզանում եղել է օրորոցախազի սովորությունը, որը հիմնականում կատարվել է իրար համակրող երկու գերդաստանների միջև, երբ օրինակ մի ընտանիքն ուներ մի քանի տարեկան տղա երեխա և ուխտ էր անում նշանադրել նրան մյուս ընտանիքի ապագա աղջկա հետ: Այսպիսի դեպքերում երբ աղջիկը ծնվում էր, տղայի հայրը խազում էր նրա օրորոցը կամ եռագույն մի թել էր կապում օրորոցի լծից՝ սրանով նշանադրելով երկու փոքրիկներին: Երբեմն էլ պատահում էր, որ փոքրիկ տղաները համակրանք էին ցույց տալիս դեպի փոքրիկ աղջիկները, և նրանց հայրերը խոստանում էին պսակել նրանց, երբ մեծանան: Այդ խոստումից հետո այս երկու փոքրիները համարվում էին նշանված: Եթե փոքրիկ նշանած աղջիկը մահանում էր, հաճախ պատահում էր, որ տղան նրա քրոջ հետ էր ամուսնանում, իսկ եթե տղան էր մահանում, նրա եղբայրն էր ամուսնանում աղջկա հետ: **Ե. Լալայեանը** նշում է օրինակ մի դեպք, երբ Վարանդայի Գիշի գյուղի քահանան ամուսնացրել էր իր կրտեսր որդուն իր մեռած որդու հարսնացուի հետ: Տե՛ս **Լալայան Ե.,** Վարանդա. Ընտանեկան բարք, Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, ԱՀ, Գիրք 2, էջ 118:

2 **Ковалевский М.М.,** Очерк происхождения и развития семьи и собственности, Москва, 1939, стр. 21.

3 Վաղ միջնադարում նախարարական միջավայրում տակավին հարատևում էր հեթանոսական հնավանդ սովորույթը, որը ժառանգել էին տոհմատիրական անցյալից: Հա-

օրինակներից է Գնելի այրու՝ Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունը[1]: Հարկ է նաև նշել որ ըստ Աղվանից արքա Վաչագանի կանոնական Սահմանադրության (V դար)[2]՝ ոչ մի տղամարդ եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանար[3]:

Պետք է նշել, որ լևիրատի սովորույթն ունի նաև աստվածաշնչյան որոշակի հիմքեր կամ մեկնություններ. «Եթե եղբայրներն ապրում են միասին և նրանցից մեկն առանց զավակ ունենալու մեռնի, ապա մեռած եղբոր կինը օտարի հետ թող չամուսնանա: Նրա մոտ թող մտնի իր ամուսնու եղբայրը, սա թող կին առնի նրան ու ապրի այդ կնոջ հետ: Նրանցից ծնված երեխան թող լինի մահացած եղբոր անունով, որպեսզի նրա անունը Իսրայելից չջնջվի...» (Երկր. օրենք 25:5-7): Ստեփան Կանայանցը հիշատակում է ոմն Հ. Հովնանյանի որդու՝ իր եղբոր կնոջ հետ ամուսնության դեպքը: Այս տեսակ ամուսնությունները տեղի են ունեցել հավանաբար իշխանական արյունը չօտարացնելու կամ հարուստ ժառանգությունը պահպանելու ձգտումից[4]: Պատահել են նաև դեպքեր, երբ նմանատիպ իրավիճակներում ամուսնու եղբայրը չի ցանկացել ամուսնանալ եղբոր կնոջ հետ[5]:

մաձայն այդ սովորույթի՝ այրիացած կինն ստիպված էր լինում ամուսնանալ միայն վախճանված ամուսնու որևէ հարազատի հետ, քանի որ տվյալ տոհմի անդամին կնության տրվածը համարվում էր նույն տոհմի սեփականությունը և իրավունք չուներ հեռանալ ամուսնու գերդաստանից: Տե՛ս **Վարդանյան Վ. Մ.,** Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 107:

1 **Բուզանդ Փ.**, նշվ. աշխ., էջ 174:

2 Տե՛ս **Հակոբյան Ա.,** Սահմանադրական մշակույթի արժեբանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում, Վաչագան բարեպաշտ Աղվանից արքայի «Սահմանադրութիւն կանոնական»-ը՝ ընդունված Աղուենի եկեղեցական ժողովում, Ս. Էջմիածին, 2020, էջ 117:

3 **Ավագյան Ռ.,** Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX – մ.թ.ա. XIXդ.), Երևան 2001, էջ 139:

4 **Կանայանց Ս.**, Ամուսնական արտակարգ երևույթներ, «Արարատ» ամսագիր, Զ-Է, Երևան, 1917, էջ 518:

5 Հին աշխարհի սովորույթներում այդ դեպքում ամուսնու եղբայրը պետք է կատարեր այսպես կոչված «հրաժարման արարողակարգ», որը վերջինիս ազատում էր եղբոր կնոջ հետ ամուսնանալու պարտավորությունից: Կինն այս արարողակարգի ժամանակ հանում էր ամուսնու եղբոր կոշիկները և հարվածում էր նրա դեմքին՝ ասելով. «Դու չցանկացար վերականգնել քո եղբոր տունը և օգնել ինձ երեխա ունենալ»: Կոշիկները

Կեսարիայի, Երկրորդ Նիկիական և Ս. Ներսեսի կանոնախմբերը հավաստում են, որ իբրև հեթանոսական շրջանի վերապրուկ, Հայաստանում որոշ տարածում ուներ «խաւսեալ կնոջ» փոխարեն նրա քրոջ հետ ամուսնանալը: Այս սովորույթը հայտնի է **սորորատ**[1] անունով, որի համաձայն, տղամարդն ամուսնական հարաբերությունների մեջ էր մտնում մի քանի կանանց՝ հարազատ քույրերի կամ զարմուհիների հետ: Այս երևույթը ողբերգական վախճան էր ունենում, որի դեմ կանոնական իրավունքը սուր պայքար էր մղում[2]:

Ե. Լալայանը լևիրատի և սորորատի երևույթների դրսևորումները բացատրում է հետևյալ կերպ. երբ նշանված ժամանակ տղան մահանում էր, վերջինիս եղբայրն էր ամուսնանում նույն հարսնացուի հետ, և կամ հարսնացուի մահվան դեպքում նրա քույրն էր փոխարինում նրան, և սա գլխավորապես այն պատճառով, որ կատարված ծախսերն ապարդյուն չանցնեն[3]:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ վերոհիշյալ հարուստ նյութի վերլուծությունը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել այրի կանանց վերաբերող ժողովրդական և եկեղեցաիրավական ընկալումների մասին: Տեսնում ենք, որ հայ միջնադարյան հեղինակներից Մխիթար Գոշը, Սմբատ Սպարապետն իրենց աշխարհական օրենքներով փորձել են պաշտպանել այրիների շահերը՝ թույլ չտալով ոտնահարել նրանց իրավունքները: Հայ եկեղեցական իրավունքը ևս սահմանել է կանոններ, որոնք կարգավորել են այրի կանանց ամուսնության հարցերը: Բայց

հանելու սովորույթը հնագույն ժամանակներում խորհրդանշում էր սեփականության դուրսբերում և փոխանցում: «Հրաժարման» արարողակարգից հետո կնոջ հետ կարող էր ամուսնանալ ամուսնու հարազատներից մեկ ուրիշը: Տե՛ս **Вардиман Е.**, նշվ. աշխ., c. 279.

[1] Լատ. soror՝ քույր - **սորորատ** երևույթն առաջին անգամ նկարագրել է Լ. Գ. Մորգանը: Եզրը շրջանառության մեջ մտցրել է Ջ. Ֆրեյզերը, որը սորորատի վերաբերյալ փաստեր է հավաքել Ամերիկայի, Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի մի շարք ժողովրդների մոտ: Գիտնականները սորորատը դիտում են իբրև խմբամուսնության մնացուկ: Տե՛ս **Սորորատ**, Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 11, Երևան, 1985, էջ 20:

[2] **Հովհաննիսյան Ս. Հ.,** Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976, էջ 139:

[3] **Լալայեան Ե.**, Մուշ-Տարոն. Ազգագրութիւն, ԱՀ, Գիրք 26, էջ 156:

ընդհանուր առմամբ ամուսնական այս հիմնահարցը շատ մեծ ծավալ չի ունեցել: Այս մասին ոչ բոլոր եկեղեցական ժողովներում է խոսվել՝ ի տարբերություն ամուսնությանը կամ կնոջ իրավունքներին վերաբերող շատ այլ խնդիրների:

Այսպիսով, այրի կինն իր կրոնամտածողությամբ դառնում էր օջախի պահապանը, պաշտպանը, հաստատուն ու անփոփոխ կերպով դրսևորում էր հերոսական բնավորություն և կամք:

Բանալի բառեր՝ *Աստվածաշունչ, այրի կին, ամուսին, եկեղեցական օրենք, կանոն, սովորույթ, գերություն, երկրորդ ամուսնություն:*

СТАТУС ВДОВЫ В ЦЕРКОВНЫХ КАНОНАХ И В КОНТЕКСТЕ НАРОДНЫХ ТРАДИЦИЙ

Лиана Даллакян

Ключевые слова: *Св. Писание, вдова, супруг, церковное право, закон, обычай, пленение, повторный брак.*

Вопросы, связанные с семейным положением вдов, не полностью, но в частных случаях регулировались каноническим правом Армянской Церкви, светским и традиционным правовыми системами. Посредством изучения армянского церковного устава, а также этнографических материалов в статье предпринята попытка определить и представить основные направления проблемы повторного замужества вдов. Выявлены такие отрывки из Св. Писания, которые впоследствии легли в основу отдельных положений, связанных с их статусом. С зарождением христианства в Армении Церковь заботилась о них, стараясь установить над ними особую опеку. Были разработаны и определены законы, регулирующие повторный брак вдов. Эти законы отражали конкретные требования времени и вошли в сферу армянского церковного канонического права в качестве борьбы с традиционными устоями. Таким образом, несмотря на строгие армянские нравы, вдовам и традиционным правом, и церковным уставом разрешалось вступать в повторный брак, ради продолжения жизни и обеспечения преемственности поколений. Тем не менее повторные помолвка или свадебный обряд проводились намного скромнее обычных. Однако законность брака соблюдалась.

Все это позволяет внести в постоянный формат брака и другие виды его проявления, которые свидетельствуют о широте доктринальной позиции Армянской Церкви относительно брака, о защите ею прав и интересов женщин.

STATUS OF WIDOW WOMEN BOTH IN THE CONTEXT OF THE ARMENIAN CHURCH RULES AND FOLK TRADITIONS

Liana Dallakyan

Keywords: *Bible, widow, husband, ecclesiastical law, custom, captivity, second marriage.*

The issues related to the marital status of widow women, though not in the larger scale but partially, were in the scope of attention of the Armenian ecclesiastical law, Armenian secular law and Armenian customary law. Based on the surveys of both the Church cannon laws and of the ethnographic sources the article tries to sum up and represent the issues of the widow marriage problem. The article also mentions the identified passages from the Biblical/ sacred papers that assisted to process and define various issues connected to the problem of widow women.

Since the beginning of Christianity in Armenia, the Armenian Church has taken care of widows, trying to establish special care for them. Special laws were adopted to regulate the marriage problems of widow's. Those laws derived in accordance with the requirements of the time and they were included in the Armenian ecclesiastical canon law independent of the customs of the time. Thus, we can state that, in spite of the strict Armenian traditions, a widow is allowed to remarry in accordance with the customary right and the church canon, thus ensuring the continuation of life and giving birth to new generation. However, there were certain restrictions for the widows' marriage ceremonies, such as engagement or wedding ceremonies could not have been / cannot be as richly celebrated as they are celebrated during the ordinary marriages. However, the legality of the marriage was maintained and it has become one of the marriage kinds. All the above mentioned comes to prove the generosity of the Armenian Church and its protection of women's rights and interests.

Լիանա Դալլաքյան *- ԵՊՀ կրոնագիտության ամբիոնի ասպիրանտ*

Лиана Даллакян *- Аспирант кафедры религиоведения ЕГУ*

Liana Dallakyan *- Postgraduate student of Chair of Religious Studies, YSU*